ԳՈՐԻՍ

ԿԱՅՈՒՆ ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ
ՄԱԿ –ի տնտեսական հանձնաժողովի Խելացի քաղաքներ ծրագրի շրջանակում

Հայաստանի կայուն բնակարանային տնտեսության, քաղաքաշինության և հողերի կառավարման բնագավառներում առկա միտումները և մարտահրավերները

11 սեպտեմբերի 2017 թվական, Երևան

Նունե Հարությունյան,
Կովկասի տարածաշրջանային
բնապահպանական կենտրոնի տնօրեն
Խելացի քաղաք ծրագրի պատասխանատու

Գորիս՝ Խելացի քաղաք. գաղափարախոսությունը

Խելացի քաղաքի համապարփակ գաղափարն ուղղված է բարելավելու

- **Քաղաքների կենսամիջավայրը՝** կառույցները, տրանսպորտը, ջրի, աղբահանության, էներգետիկ ծառայությունները, տեղեկատվական համակարգը և տեղեկատվական տեխնոլոգիաները
- **Կառավարման համակարգը՝**
  - միջոլորտային համագործակցություն,
  - համագործակցություն տարածքային, ազգային և տեղական կառավարման մարմինների միջև, և այլ շահառուների միջև,
  - համագործակցության պլատֆորմների հիմնում
  - այլ քաղաքների հետ համարծակցության ստեղծում
- **Սոցիլական կապիտալը՝** կրթություն, սոցիալական, հասարակական, մշակութային ոլորտները
- **Տնտեսականան պայմաններ՝** աղքատության նվազեցում և աշխատատեղերի ստեղծում
- **Քաղաքացիների փորձառություն**
- **Քաղաքային տուրիզմ**

Խելացի քաղաքի թեմատիկ բաղադրիչները

- Տնտեսություն՝
  - Տնտեսական աճ,
  - Ներդրություն և սպառում
- Բնապահպանություն՝
  - Օդ, կլիմայական պայմաններ,
  - Բնական աղետներ
  - Հող և կենսաբազմազանություն
  - Խմելու ջուր
- Հասարակություն՝
  - սոցիալական խնդիրներ,
  - առողջապահություն,
  - կրթություն
  - ժողովրդագրություն

Խելացի քաղաքի բաղադրիչները

Խելացի կառավարում և կրթություն

- Խելացի կառավարում
- Խելացի կրթություն

Քաղաքաշինություն/ կառուցապատում

- Խելացի քաղաքաշինություն
- Խելացի կենսոլորտ և միջավայր, էներգիա
- Խելացի սոցիալական հատված/աշխատատեղեր,

Շարժունակություն

- Խելացի շարժունակություն
- Ենթակառուցվածքներ
- Խելացի ՏՏ

Խելացի կապ/ տեղեկատվություն

- Տեղեկատվության հասանելիություն, ցանցեր

Խելացի էներգիա

- Էներգախնայողություն
- Այլընտրանքային վերականգնվող էներգիա
- Ռեսուրսների արդյունավետ օգտագործում

ԽԵԼԱՑԻ ԿԱՅՈՒՆ ՔԱՂԱՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՐ

- **ՄԱԿ-ի Կայուն զարգացման Նպատակ 11-ը `նախատեսում է մինչև 2030 թվականը քաղաքները և բնակավայրերը դարձնել**
  - անվտանգ,
  - դիմակայուն,
  - ներառական
- **Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է բարելավել քաղաքաշինական կյանքի ու զարգացման վրա ազդող գործոնները**: Քաղաքների պլանավորումը, սոցիալական խնդիրները, քաղաքացիների իրազեկությունն ու մասնակցությունը, ժողովրդագրական փոփոխությունները, շրջակա միջավայրը, կանաչ գոտիները, կայուն տրանսպորտային համակարգը, ռեսուրսների արդյունավետությունը, ինչպես նաև տնտեսական հատվածը էապես ազդում են քաղաքների և բնակավայրերի զարգացման վրա:

Փուլ 1: Մեկնարկ: Աշխատաժողով

- ՄԱԿ-ի ԵՏՀ Բնակարանային տնտեսության և հողի կառավարման կոմիտեի, ՀՀ քաղաքաշինության նախարարության, Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, Գորիս քաղաքի և Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի կողմից կազմակերպված տվյալների հավաքագրման առաքելությունը և “Pyramid” աշխատաժողովը տեղի են ունեցել 2015 թվականի փետրվարի 9-ից 13-ն ընկած ժամանակահատվածում Գորիս և Երևան քաղաքներում: Առաքելության հիմնական նպատակն էր հավաքագրել տվյալներ՝ **Գորիսը խելացի քաղաք պիլոտային ծրագրի** շրջանակներում ներկայացնելու և քաղաքի նկարագիրը մշակելու համար:
- Միջազգային փորձագետները ներկայացրել են **Միացյալ խելացի քաղաքներ**. Խելացի քաղաքային լուծումներ անցումային և զարգացող երկրների համար նախագիծը, իրենց կողմից մշակած ցուցանիշները, խելացի քաղաքների հայեցակարգը: Ազգային փորձագետները բնութագրել են քաղաքի ներկայիս վիճակը տարբեր տեսանկյուններից (շրջակա միջավայր, քաղաքային պլանավորում, բնակարանաշինություն, էներգաարդյունավետություն, սոցիալական հարցեր):
- Մասնակիցները քննարկել են շրջակա միջավայրին, տնտեսությանը և հասարակությանն առնչվող հարցերը՝ համաձայն «Pyramid 2030 Campaign» աշխատաժողովի: Երեք աշխատանքային խմբերի կատարած աշխատանքի արդյունքները քննարկվել են լիագումար նիստին:
- Առաքելության վերջին օրը միջազգային փորձագետները համատեղ քննարկել են ՀՀ քաղաքաշինության նախարարության, Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, Ասիական զարգացման բանկի և ՀՀ Տարածքային կառավարման նախարարության հետ համագործակցությանն առնչվող հարցերը:

Խելացի կայուն քաղաքների ցուցանիշներ

- ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Բնակարանային տնտեսության և հողի կառավարման կոմիտեն որոշում է կայացնում կոմիտեի 2014-2015 թվականների աշխատանքային ծրագրում որպես առաջնահերթություն ներառել «խելացի քաղաքներ» թեման:
- ՄԱԿ-ի ԵՏՀ, հեռահաղորդակցության միջազգային միության, և գործընկերների կողմից մշակվել են Կայուն քաղաքային զարգացմանն առնչվող ցուցանիշները, որոնք վերլուծվել են դրանց արդիականացումը գնահատելու և ԵՏՀ տարածաշրջանի ցածր կամ միջին եկամուտ ունեցող երկրներում իրացվելիության մակարդակը որոշելու համար: Ցուցանիշները կարող են օգնել դասակարգել քաղաքի առաջնահերթ, առավել կարևոր հարցերը և համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ուղղված դրա կայուն աճին: Վերջապես, ցուցանիշները կարող են նաև դիտվել որպես մոնիտորինգի գործիքներ՝ գնահատելու որոշակի ժամանակահատվածում իրականացված միջոցառումների արդյունքում տեղի ունեցած փոփոխությունները:
- ՄԱԿ-ի ԵՏՀ-ի Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից մշակած խելացի կայուն քաղաքների ցուցանիշների խումբը ներառում է ընդհանուր թվով 72 ցուցանիշ՝ հիմնական և լրացուցիչ, որոնք կառուցված են ըստ՝
  - Տարածքի
  - Թեմայի
  - Տիպաբանության
- Մշակվել է կոնկրետ ցուցանիշների խումբ, որը նկարագրում է տվյալ քաղաքի զարգացման ներուժ ունեցող ոլորտները՝ մոտ 18 թեմատիկ ոլորտներ, ներառալ
  - Տնտեսական զարգացման ոլորտ,
  - Շրջակա միջավայրի պահպանության ոլորտ,
  - Հասարակության և մշակույթի ոլորտ:

Յուրաքանչյուր երկիր ՄԱԿ-ի ԵՏՀ-ի Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից մշակած ցուցանիշների խմբից ընտրում է իր համար կիրառելի ցուցանիշները, դրանց ավելացնում նաև իր կողմից մշակած նորերը:

Տնտեսական զարգացման ոլորտ

- Տեղեկատվական տեխնոլոգիաների (ICT) ենթակառուցվածք
- Նորարարություն
- Զբաղվածություն
- Առևտուր (էլեկտրոնային առևտուր և արտահանում/ներմուծում)
- Արտադրողականություն
- Ֆիզիկական ենթակառուցվածք (խմելու ջուր, առողջապահություն, էլեկտրաէներգիա, տրանսպորտ և շինություններ)

Շրջակա միջավայր

- Օդի որակ
- Ջուր
- Աղմուկ
- Շրջակա միջավայրի որակ
- Կենսաբազմազանություն
- Էներգիա

Հասարակության և մշակույթի ոլորտ

- Կրթություն
- Առողջապահություն
- Անվտանգություն (աղետների դեպքում օգնություն, արտակարգ իրավիճակներ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ)
- Բնակարանային տնտեսություն
- Մշակույթ
- Սոցիալական խմբերի ընդգրկվածություն

ԳՈՐԻՍ ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔԻ ՆԿԱՐԱԳՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՆԿԱՐԱԳԻՐ



ՈՐԻՍ ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔԻ ՆԿԱՐԱԳՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՆԿԱՐԱԳԻՐ

- ՄԱՍ I: Գորիս քաղաքի բնութագիրը
- Գլուխ 1.1: Աշխարհագրական դիրքը
- Գլուխ 1.2: Գորիս քաղաքըԳլուխ
- 1.3: Բնակչությունը և ժողովրդագրական իրավիճակը
- ՄԱՍ II: Իրավական և ինստիտուցիոնալ շրջանակ
- Գլուխ 2.1: Քաղաքաշինություն և հողի կառավարում
- Գլուխ 2.2: Իրավական դաշտի կարգավորում
- Գլուխ 2.3: Բնակարանային տնտեսություն
- ՄԱՍ III: Ցուցանիշների վերլուծություն
- Գլուխ 3.1: Տնտեսություն
- Գլուխ 3.2: Շրջակա միջավայր
- Գլուխ 3.3: Հասարակություն և մշակույթ

ԳՈՐԻՍ ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔԻ ՆԿԱՐԱԳՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՆԿԱՐԱԳԻՐ

- ՄԱՍ IV: Ֆինանսական շրջանակ
- Գլուխ 4.1: Առկա ֆինանսական մեխանիզմները կայուն քաղաքաշինության զարգացման համար
- Գլուխ 4.2: Հնարավորություններ պետական-մասնավոր գործընկերության և այլ ֆինանսական մեխանիզմների համար
- Գլուխ 4.3: Ֆինանսական միջոցների առկայությունը
- Գլուխ 4.4: Ֆինանսական մեխանիզմների հիմնական գրավիչ ոլորտները
- Գլուխ 4.5:Քաղաքականության և բանկային համակարգի միջև կապը
- Գլուխ 4.6: Ազգային և տեղական ֆինանսական կազմակերպությունների դերը
- Գլուխ 4.7: Ֆինանսական պլան
- ՄԱՍ V: Առաջարկությունների ամփոփ նկարագրություն

Տնտեսական ցուցանիշների վերլուծություն

- Գորսիում փորձարկվել են տնտեսության զարգացման սյուների ցուցանիշները, որոնք բնութագրում են տարածաշրջանի զբաղվածության, ՏՀՏ ենթակառուցվածքի, ֆիզիկական ենթակառուցվածքների, նորարարության, արտադրողականության և առևտրի ոլորտները

- Հիմնվելով առկա ենթակառուցվածքների վրա՝ տարածաշրջանում առկա են զբոսաշրջության, կրթության և գիտական հետազոտությունների ոլորտների զարգացման, տարածաշրջանային ապրանքների արտադրության բնապահպանական տեխնոլոգիաների (թափոնների վերամշակում, էներգետիկ համակարգերի վերականգնում) խթանման բոլոր նախադրյալները:

Առաջարկվող միջոցառումներ

- Գորիսը հագեցած է հիմնական ենթակառուցվածքներով, սակայն նկատվում է խելացի համակարգերի պակաս, օրինակ, հանգստի գոտիներում հասարակական տրանսպորտի արդյունավետ գործունեության կազմակերպում:
- Ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարման ենթակառուցվածքները համեմատաբար կայուն են: Սակայն, ջրային ռեսուրսների, ջրահեռացման, հեղեղումներից պաշտպանության և վերահսկման ենթակառուցվածքները, ինչպես նաև տրանսպորտային միջոցները գտնվում են մաշվածության բարձր աստիճանում:
- Ձեռներեցություն: հարկավոր է մշակել հատուկ միջոցառումների ցանկ և քննարկել ներդրումային ծրագրեր:
- Մեկ այլ կարևոր խնդիր է երիտասարդների շրջանում գործազրկության մակարդակը: Սա պայմանավորված է ոչ բավարար ներդրումներով:
- Տարածաշրջանը հարուստ է արդյունաբերական պոտենցիալով, սակայն դրանք ըստ արժանվույն չեն աշխատում: Քաղաքի վարչակազմի և արտաքին փորձագետների կողմից առաջարկվում է իրականացնել հետևյալ հիմնական միջոցառումները.
    - մշակել կոշտ թափոնների կառավարման համակարգ
    - բարելավել տեղական համալսարանի հետ և ՓՄՁ-ների հետ գիտական համագործակցությունը
    - հիմնել «Գորիսի օր» և հնարավորություն տալ ՓՄՁ-ներին ներկայացնել իրենց գործունեության ոլորտները
    - բարելավել տեղական տուրիզմը՝ մշակելով մշակութային միջոցառումների գործունեության ծրագիր:

Շրջակա միջավայրի ցուցանիշների վերլուծություն

- Առանցքային խնդիրներից են կենցաղային թափոնների պարբերաբար կուտակումը, դրանց ապօրինի հրկիզումը: Թափոնների պատշաճ տեսակավորում և վերամշակում չի իրականացվում: Առկա է նաև Վարարակն գետի հունի աղտոտման վտանգ՝ կապված աղբակուտակումների հետ, ինչպես նաև մաքրման կայանի բացակայության պատճառով կոյուղաջրերը թափվում են գետը՝ ազդելով ջրի որակի վրա: Քաղաքի հանգստյան գոտիներում հանրային կանաչ տարածքները բավարար չեն էներգախնայողությանն ուղղված միջացառումների կազմակերպման համար:

Առաջարկվող միջոցառումներ

- Շրջակա միջավայրին առնչվող ցուցանիշները վերլուծվել են ըստ ակնկալվող օգտակարության, պահանջվող ռեսուսների առկայությամբ և կարճաժամկետ հատվածում իրականացնելու հնարավորությամբ:
  - ստեղծել հանրային կանաչ տարածքներ
  - մշակել թափոնների կառավարման համակարգ և զարգացնել հանրային իրազեկման ծրագիր՝ «Թափոնը ռեսուրս է» խորագրով
  - կառուցել կեղտաջրերի մաքրման կայան
  - վերականգնել ջրհեղեղներից պաշտպանման հաստատությունները
  - իրականացնել օդի որակի մոնիթորինգ

Հասարակություն և մշակույթ. վերլուծություն

- Ըստ ժողովրդագրական տվյալների՝ Գորիսն ունի բավականին երիտասարդ բնակչություն: Մեծահասակները (62 տարեկան և ավել) կազմում են բնակչության 16%-ը: Քաղաքի երիտասարդ բնակչության թիվը նվազում է՝ գործազրկության պատճառով: Գորիսը նաև հագեցած է ուսումնական հաստատություններով: Տեղի պետական համալսարանում սովորում է մոտ 2000 ուսանող: Համալսարանում դասավանդվում է բանասիրություն, պատմություն և աշխարհագրություն, մանկավարժություն, կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա և մաթեմատիկա:

- ՏՏ ոլորտում ուսանողների կարողությունը գնահատվել է 90%
- Գրագիտության մակարդակը գնահատվել է որպես լիարժեք՝ 100%
- Բարձրագույն կրթություն ունի բնակչության 65%-ը
- Դպրոցների ընդգրկվածությունը՝ 84 %

Հասարակություն և մշակույթ. վերլուծություն

Առողջապահություն

- Համայնքում գործում է 2 խոշոր բուժհաստատություն, որոնցից մեկը մասնագիտացված է սրտաբանության ոլորտում: Ըստ կատարված ուսումնասիրությունների կարելի է փաստել այն հանգամանքը, որ 2 հիվանդանոցներում էլ կան հիվանդների համար բավարար թվով մահճակալներ: Սակայն քաղաքը կարիք ունի վերականգնողական կենտրոնի ստեղծման

Անվտանգություն

- Գորիսը գտնվում է սեյսմիկ ռիսկային գոտում: Երկարատև անձրևների արդյունքում քաղաքի տարածքում հաճախ են լինում ջրհեղեղներ, որը մեծ ազդեցություն է ունենում հողի հատկությունների փոփոխության վրա: Իրավիճակն ավելի է վատթարանում ջրհեղեղներից պաշտպանության ծրագրի անգործության հետևանքով:
- Խոցելիության գնահատում. Ուսումնասիրությունները վկայում են ջրհեղեղների վերահսկման և երկրաշարժի հնարավոր իրազեկման ուղղություններով կանխարգելիչ միջոցառումների հրատապության մասին:

  (1). Հեղեղումների ռիսկ. ջրհեղեղներին դիմակայելու համար անհրաժեշտ է ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ ռիսկային տարածքների բացահայտման ուղղությամբ, ինչպիսիք են՝ Վարարակն գետի հունի մաքրումը:

  (2). Երկրաշարժեր. որպեսզի բարձրացնենք երկրաշարժերի մասին բնակչության իրազեկությունը, անհրաժեշտ է նախակրթական հաստատություններում և դպրոցներում, ինչպես նաև այլ կազմակերպություններում կազմակերպել թեմային առնչվող դասընթացներ:

Հասարակություն և մշակույթ. վերլուծություն

Բնակարանային տնտեսություն

- Գորիսի բնակարանային ֆոնդը շատ հին է: Պատմական շենքերը կազմում են քաղաքի հիմնական բնակֆոնդը և դրանց պահպանումը կարգավորվում է օրենքով: Պատմական հին շենքերը հիմնականում բնակեցված են ծեր մարդկանցող, ովքեր ոչ ֆիզիկապես, ոչ էլ ֆինանսապես ի վիճակի չեն պահպանել դրանք:
- Բնակարանային ծախսեր. Ըստ քաղաքապետարանի ներկայացրած տվյալների էլեկտրաէներգիայի և կոմունալ ծախսերը ձմռան ամիսներին կազմում են եկամտի 60%-ը
- Վթարային կացարանների թվի կրճատում. Սիրիայի փախստականների ներկայումս շուրջ 67 ընտանիք ապրում են քաղաքի ժամանակավոր կացարաններում
- **Հանրային մասնակցություն**
  - մշակել կանոնների և կանոնակարգերի ՝ բնակիչների մասնակցությունը հասարակական հարցերում խթանելու համար
  - ներդնել այնպիսի համակարգեր, որոնք կխթանեն բնակիչների ներգրավվածությունը, օրինակ՝ առցանց տեղեկատվության տրամադրում և տեղեկատվական տեխնոլոգիական համակարգերի ներդնում
  - ներգրավել մասնակիցներ քաղաքականությունների մշակման, խոշոր հասարակական նախագծերի ստեղծման գործընթացում
  - հասարակական որոշումների կայացման գործում ներգրավել բնակիչներ անկախ տարիքից և սեռից:

Առաջարկվող միջոցառումներ

- Հաշվի առնելով ակնկալվող օգուտները, պահանջվող ռեսուրսները և կարճաժամկետ հատվածում դրանց իրականացնելու հնարավորությունները՝ առաջարկվում է սոցիալական և մշակութային ոլորտում իրականացնել հետևյալ միջոցառումները.
    - բարելավել քաղաքի տնտեսությունը և ստեղծել գործարարության համար ավելի լայն հնարավորություններ բնակիչների համար
    - ներդնել սոցիալական բնակարանային ֆոնդ և կազմակերպել պատմական շինությունների պահպանումը
    - ներդնել էներգետիկայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ կիրառման եղանակ
    - խթանել առողջ ապրելակերպը
    - մշակել «Սմարթ կրթություն» ծրագիր՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և մասնագետների համար դասընթացներ կազմակերպելու միջոցով
    - գոյություն ունեցող չբնակեցված շենքերը դարձնել հանգստի կամ կրթական կենտրոններ:

ՄԱՍ IV: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

- 2016 թվականի դեկտեմբերի 31-ի տվյալներով ՀՀ-ում գործունեություն են իրականացնում 17 առևտրային և 1 զարգացման բանկ: Գորիսում գործում է 6 բանկ իր մասնաճյուղերով, 9 բանկոմատ: Աշխատավարձերը, կենսաթոշակները և սոցիալական նպաստները վճարվում են էլեկտրոնային տարբերակով: Բանկային հաշիվները կարող են օգտագործվել վարձավճարների էլեկտրոնային վճարման նպատակով: Կարող ենք ասել, որ Գորիսն ունի լավ զարգացած բանկային համակարգ:
- Սեփական եկամուտների բաժինը ընդհանուր եկամուտների մեջ 16.7%, որը ավելի ցածր է, քան Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմիններինը (2011 թվականին կազմել է 28.9%): Ծախսերի ամենախոշոր մասնաբաժինը կրթական ոլորտի հետ կապված ծախսերն են՝ մոտավոր 42.7%:
- Պետական մասնավոր գործընկերություն
- Անհրաժեշտ է ուսումնասիրել և մշակել ՊՄԳ ռազմավարություն և ստեղծել համագործակցություն տարբեր ոլորտներում, ստեղծել համագործակցություն տարբեր ոլորտներում, օրինակ՝ ջրային ռեսուրսների ռազմավարությունը պետք է ներառի կեղտաջրերի մաքրման միջոցառումների մշակում, ջրհեղեղի կանխարգելում և ջրային ռեսուրսների օգտագործմանն առնչվող հիդրոտեխնիկական կառուցվածքներ:

Առաջարկություններ

- Պետական մարմինները իրենց կողմից տնօրինած հողերը կարող են տրամադրել ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով
- Սահմանել հարկային արտոնություններ անշարժ գույքի սեփականատիրոջ համար, ով հանրային աշխատանքների միջոցով իրականացրել է բարելավումներ
- Հողօգտագործման վճարները սահմանել դրա օգտագործման համար ամենապահանջված ժամանակահատվածի համար, օրինակ՝ կայանատեղիների վճարները գանձել զբոսաշրջային սեզոնի մեկնարկից սկսած:
- Խելացի քաղաքային ներդրումները հիմնված են ՏՀՏ ոլորտի վրա և, հետևաբար, անհրաժեշտ է զարգացնել համագործակցությունը մասնավոր ընկերությունների հետ:

Ֆինանսական գործունեության իրականացման պլանում առաջարկվող ուղեցույցներն են

Կազմել պարզ ֆինանսական սխեմաներ. Հաշվի առնելով առկա ֆինանսական ռեսուրսների պակասը և կարգավորման խոչընդոտները՝ Գորիսի ֆինանսավորման սխեմաները պետք է լինեն պարզ և հուսալի: Նույնիսկ ամենախոշոր նախագծերը չեն պահանջում բարդ ֆինանսական կառուցվածք: Հարկ է նշել նաև, որ ՊՄԳ-ների ստեղծման և ֆինանսական սխեմաներ նախագծելու ոլորտում քաղաքն ունի սակավ փորձառնություն:

Հետևել գործարքային և կազմակերպչական ծախսերին. Պետական-մասնավոր գործընկերությունը (ՊՄԳ) ներառում է գործարքային և կազմակերպչական ծախսեր: Այս ծախսերն ավելանում են, երբ հաստատվում են պայմանագրային հարաբերություններ, հատկապես տրանսպորտային կազմակերպությունների հետ: Անհրաժեշտ է համեմատել բոլոր այլընտրանքները:

Առկա ակտիվների վերանորոգման և պահպանման առաջնահերթություն. Գորիսում առկա ակտիվների պահպանումը և վերանորոգումը գերակա խնդիր է: Մարդկային կապիտալը պետք է դիտարկվի որպես առաջնային թիրախ: Անհրաժեշտ է նախապատվությունը տալ տեղական մարդկային ռեսուրսներին, հատկապես առողջապահության և կրթական ծառայությունների բնագավառում:

- **Ընտրել վստահելի գործընկերներ.** Անհրաժեշտ է ներգրավել կայացած, վճարունակ գործընկերներ, ովքեր արժևորում են սեփական վարկային պորտֆելների իրացվելիությունը՝ կապված արտարժույթի տատանումների հետ:
- **Կազմել նախագիծը ժամանակին և բյուջեին համապատասխան.** Անհրաժեշտ է կազմել նախագիծը առանց ժամկետների և բյուջեի ծախսերի խախտմամբ:
- **Ուշադիր լինել արտոնյալ ժամկետներին և երկարաժամկետ հատվածին.** Արտոնյալ ժամկետներում վարկերը կարող են տրվել անտոկոս, չհարկվող ժամանակահատվածով, իսկ վարկի մարման երկար ժամկետները հնարավորություն են տալիս մարել վարկը ավելի երկար ժամկետներում:
- **Կազմել երկարաժամկետ ֆինանսական պլան.** Գորիս քաղաքի համար կարևոր է երկարաժամկետ ֆինանսական պլանի մշակում (օրինակ՝ ներկայացնել ավելի քան 5 տարիների համար առաջարկություններ): Երկարաժամկետ հեռանկարում դիտարկել ստանձնած և կանխատեսելի դրամական հոսքերը յուրաքանչյուր տարվա համար:

Ֆինանսական գործունեության իրականացման պլանում առաջարկվող ուղեցույցներն են

- Մշակել գրավիչ և ֆինանսապես իրագործելի ծրագրեր. Նախ անհրաժեշտ է առանձնացնել ենթակառուցվածքի թույլ կողմերը, այնուհետև որոշել նախագծի գրավչության աստիճանը քաղաքացիների և կազմակերպությունների համար և դրամական միջոցների հոսքերը:
- Գնահատել նախագծի սոցիալ-տնտեսական օգուտները. Միջազգային դոնոր կազմակերպությունները կամ միջազգային ֆինանսական հաստատությունները պահանջում են գնահատել առաջարկվող նախագծի սոցիալ-տնտեսական օգուտները: Օրինակ՝ աղտոտման նվազեցում, առողջապահական բարելավումներ, ժամանակի խնայողություն, էներգախնայողություն, անվտանգության բարելավումներ: Հատկանշական է, որ առավել արժեքավոր օգուտները, որոնք պահանջում են նաև խոշոր ծախսեր, այն նախագծերն են, որտեղ մարդու կյանքը վտանգված է (առողջապահություն, անվտանգություն, ապահովություն):
- **Հասնել կրիտիկական զանգվածի.** Ընթացիկ և պոտենցիալ պահանջարկի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս սահմանել հնարավոր ներդրումների կրիտիկական չափը:
- **Առաջնահերթությունը տալ փոքր և միջին նախագծերին.** Քանի որ գործնականում միայն ընկերությունները կարող են վարկ վերցնել, ՊՄԳ դառնում է ավելի կարևոր:
- **Ներկայացնել բարեփոխումները որպես համալիր և արժեքավոր գործողությունների փաթեթ:** Բարեփոխումների օրակարգը առավել հաջողակ է, եթե ներկայացված է համալիր փաթեթով, որտեղ իրականացվելիք միջոցառումները լրացնում են միմյանց, իսկ շահագրգիռ կողմերը օգուտներ են ունենում տարբեր ուղղություններով: Օտարերկրյա կամ ազգային ներդրողները հետաքրքրված են համայնքի երկարաժամկետ զարգացման ծրագրով:
- **Նախագծերի պլանավորում՝ նախատեսված ավելի խելացի և ավելի կայուն Գորիս քաղաքի համար.** Միջազգային մասնավոր հատվածը փնտրում է մեծ, լավ սահմանված, պատշաճ կերպով մրցույթով հայտարարված, արհեստավարժորեն բանակցված ծրագրեր:

REC CAUCASUS